

տեսչութենէն վտարեց զինք չար նախանձը (նոյն, 592): Նոյն յուզեալ եւ յուզիչ բողոքն է՝ որ դեռ կը հնչէր դարեր վերջ Կիրակոսի բերանէն՝ այդ «ծոյլ եւ որովայնաւոյ կրօնաստանաց» դէմ, ինչպէս տեսանք վերեւ (295). եւ զոր ուրիշ շատեր ալ կրնային կրկնել Ստեփանոս վարդապետի հետ, որոյ դէմ լարուած հակառակութիւնք եւ ամբաստանութիւնք՝ հպիսկոպոսական գաւազանը շահեցուցին իրեն՝ ողջամիտ Բարսեղ կաթողիկոսի կողմանէ (Հյպտ. 378). կամ Կոստանդին Երզնկացւոյն հետ, որ զանազան ակնարկներէ զատ յատուկ քերթուած մ'ալ յօրինած է «ումանց» դէմ, որոնք «կրճէին ատամն» իւր կարողութեան ու գրուածոց վրայ, շարժելով միշտ հին դժնեայ նախանձէն (Կոս. 97):

Նկատելով այդ բոլորը, միջանկեալ ու լոկ մասնական երեւոյթներ կը մնան Արշարունեաց մէջ Երասխաձորոյ վանքը, ուր է դարուն «ժողովեալ էին մանկունք ճարտարք եւ գիտունք Հայոց» (Որբ. 82). կամ Տաթեւոյ ուխտը, որ է դարուն «Գլուխ էր ամենայն գիտնոց Հայոց», եւ Աթէնքի դիրքն ունէր Հայաստանի մէջ, կ'ըսէ նոյն պատմիչը (97). եւ որ Թ-Թ դարուն նոր բարգաւաճում մ'ալ կը ստանայ, եւ «լի էր ծովամատոյց փիլիսոփա-